Ը.

ԲԱԳՐԵՒԱՆԴ ԳԱՒԱՌ

Յարաւատ նահանգի հարաւային գաւառաց մին է Բագրեւանդ, որ բռնած է Արածանին՝ կամ Մուրատը կազմող երկու ճիւղերու, Շեռեան ու Մուրատ գետոց հովտի ամբողջ տարածութիւնը և կամ այսօր Դիատին (Շահապիվան), Գարաքիլիսայ և Ալաշկերտ (Վաղարշակերտ) կոչուած վայրերն, որք ի հիւսիսոյ շրջապատուած են Ջրաբաշխ լեռանց և ի հարաւոյ Ղլիճ-կէտուկ (Թրի-կիրճ) և Ալատաղ (Ծաղկանց) լեռանց շղթայով. նաև Սուկաւէտ (Քօսատաղ)

՝ Ըստ պատմութեան Արածանին կը կարծուի Շեռեանի և Մուրատի միացմամբ ի հարաւ ուղղուած Մուրատ (Եփրատ) գետն, որ կսկսի Բագրեւանդայ արեւմտեան դաշտի կեդրոնը գտնուած Գարաքիլիսայ գիւղաքաղաքից ½ ժամ ի հարաւ, որ կերկարի ի Մանազկերտ, Յապահունիս և ի Մուշ